

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերություն

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

N 1-09S 29.04.2010թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

0012, ք. Երևան, Վ. Վաղարշյան 20, հեռ.26-08-62, ֆաքս 26-11-00, e-mail: info@arpa-sevan.am

գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները

| | |
|-----------------------------|-------------------------------|
| Տեղաբաշխված արժեթղթերի դասը | հասարակ անվանական բաժնետոմսեր |
| Արժեթղթերի քանակը | 20452 հատ |
| Արժեթղթերի անվանական արժեքը | 2500 դրամ |

«Մենք ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի, որի հետ առնչվում է ընկերությունը»:

Ստորագրող անձինք՝



Պարույր Հակոբյան

Անդա Փարսյան

Զորիկ Վարդանյան

Ծնօրեն

գլխ. հաշվապահ

խորհրդի անդամ

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը կազմված է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ.դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04 պահանջների և իր մեջ ներառում է անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված 2009թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները և ընկերության կառավարման մարմինների տարեկան զեկույցը:

1. ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԸ

Սկսած 2005թ. ընկերության աուդիտը իրականացնում է «ԹՄ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը:

«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Տերյան 105/1:

«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ այլ մասնագիտական միություններին չի անդամակցում:

2. ԲԻԶՆԵՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հիմնական գործունեությունը և շուկաները

Ընկերության հիմնական գործունեությունը կապիտալ շինարարության իրականացումն է քաղաքաշինության՝ էներգետիկ, հատուկ հիդրոտեխնիկական և տրանսպորտային ոլորտներում:

Ընկերությունը իրականացնում է նաև «Որոտան-Արփա» թունելի պահպանման, «Արփա-Սևան» թունելի շահագործման ծառայությունների մատուցման և «Արփա-Սևան» թունելի վերանորոգման աշխատանքները:

Ընկերության հիմնական գործունեությունն է հիդրոտեխնիկական և էներգետիկական ոլորտներում հատուկ նշանակության ստորգետնյա և վերգետնյա կառույցների շինարարությունը:

2009թ. ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքների և մատուցած ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 3343569 հազ.դր., որոնցից առավել կարևոր կառույցների աշխատանքների և մատուցված ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են թիվ -1 աղյուսակում:

Աղյուսակ 1

| h/h | Պատվիրատու կազմակերպության և կառույցի անվանումը | առ.ԱԱՀ-ի հազ.դր. |
|-----|---|---------------------|
| 1 | «ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ պատվերով իրականացվող ք. Երևան Նոր Նորքի համայնքի Քոչինյան 13.10,13/20 հասցեներում բետոնե հատակների պատրաստում | 100807.6 |
| 2 | Հարավ Կորեական GS Engineering & Consruction Corp. Հայաստանի մասնաճյուղի ենթակապալով կառուցվող «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով քերմաէլեկտրակայանի շինարարության աշխատանքները» | 1639646.0 |
| 3.1 | ՀՀ նախագահի աշխատակազմի գործերի կառավարչության պատվերով իրականացվող «Կոնդի առանձնատների տնտեսություն» շենքերի արտաքին կոնունիկացիաների և արտաքին հարդարման աշխատանքներ | 76109.3 |
| 3.2 | Տաշիր բարեգործական հիմնադրամ | 67272.8 |

| | | |
|---|--|----------|
| 4 | «Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարի տեխնիկական վիճակի բարելավման ու նորոգման շրջանակներում իրականացվող «Արփա-Սևան» թունելի առանձին հատվածների վերականգման և վերակառուցման աշխատանքներ | 679103.4 |
| 5 | «Ոռոգման համակարգերի վերականգման հրատապ ծրագրի » կողմից ֆինանսավորվող Արմավիրի մայր ջրանցքի վերականգման աշխարանքներ | 210310.7 |
| 6 | «Հազարամյակի մարտահրավեր» Հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից ֆինանսավորվող Չորս ինքնահոս համակարգերի կառուցումը Այգեգարդում, Շենիկում, Մանթաշում և Վարդենիսում | 246954.4 |
| 7 | Հազարամյակի Մարտահրավեր «Հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից Արզնի-Շամիրամի, Ստորին Հրազդանի, Արտաշատի և Շիրակի մայր ջրանցքների վերակառուցում | 89692.0 |
| 8 | «Որոտան-Արփա» թունելի և «Արփա-Սևան» թունելի շահագործման ծառայությունների մատուցում | 225400.0 |

Ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքները և մատուցված ծառայությունները ամբողջությամբ իրացվում են ներքին շուկայում:

Ներքին շուկայում ընկերությանը մրցակցություն են ցուցաբերում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին (արտասահմանյան) շինարարական կազմակերպությունները, որոնք գործնականում իրականացնում են աշխատանքներ քաղաքաշինության բոլոր ոլորտներում:

Բայց չնայած վերը նշված մրցակիցների գոյությանը, հարկ է նշել, որ հատուկ նշանակության բարդ հիդրոտեխնիկական ստրոգետնյա կառույցների շինարարության համար անհրաժեշտ քանակության մեքենա-սարքավորումներով, նյութատեխնիկական բազաներով և համապատասխան որակավորում ու աշխատանքային փորձով ունեցող մասնագետների ապահովվածության աստիճանով «Արփա-Սևան» ԲԲԸ ներքին շուկայում գրավում է առաջատար դիրք:

3.ԹՈՂԱՐԿՈՂԻ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ընկերությունը այլ խմբի անդամ չէ:

«Արփա-Սևան» ԲԲԸ 15.06.2004թ. որպես միակ հիմնադիր հիմնադրել է 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ կանոնադրական կապիտալ ունեցող «Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ:

Հասցեն՝ 0012. ք. Երևան Վ. Վաղարշյան -20:

4.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հաշվետու տարում ընկերության հիմնական միջոցների արժեքը կազմել է 3 680 795 հազ. դրամ, կուտակված մաշվածությունը՝ 1 685 348 հազ. դր., հաշվեկշռային արժեքը՝ 1 995 447 հազ. դր.: Հիմնական միջոցների ընդհանուր մաշվածությունը կազմում է 45.8 տոկոս :

Ըստ առանձին դասերի հիմնական միջոցների արժեքի, կուտակված մաշվածության, հաշվեկշռային արժեքի և յուրաքանչյուր դասի հիմնական միջոցի մաշվածության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ- 2 ում:

Աղյուսակ 2
հազ. դրամ

| Դասի անվանումը | արժեքը | կուտակված մաշվածություն | հաշվեկշռ. արժեքը | մաշվածքը % |
|--|-----------|-------------------------|------------------|------------|
| Շենքեր և կառուցվածքներ | 638200 | 112058 | 526142 | 17.6 |
| Մեքենաներ և սարքավորումներ | 1 720137 | 803581 | 916556 | 46.7 |
| Տրանսպորտային միջոցներ | 920409 | 512824 | 407585 | 55.7 |
| Արտադրական և տնտեսական գույք | 20952 | 12378 | 8574 | 59.1 |
| Այլ հիմնական միջոցներ | 26453 | 6301 | 20152 | 23.8 |
| Ընդամենը շահագործման մեջ գտնվող հիմն. միջոցներ | 3 326 151 | 1 447 142 | 1 879 009 | 43.5 |
| Շահագործման չհանձնված հիմնական միջոցներ | 118 | | 118 | 0 |
| Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ | 344426 | 238206 | 106220 | 69.2 |
| Ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմն. միջոցներ | 344544 | 238206 | 106338 | 69.1 |
| Հողամասեր | 10100 | | 10100 | 0 |
| Ընդամենը հիմնական միջոցներ, 2009թ. | 3680795 | 1685348 | 1995447 | 45.8 |

Նախորդ տարվա համապատասխան ցուցափշները կազմել են`

| | | | | |
|---|---------|---------|---------|------|
| Ընդամենը հիմնական միջոցներ, 2008թ. | 3042682 | 1377096 | 1665586 | 45.3 |
| Նախորդ տարվա համեմատ բացարձակ արժեքով աճը | 638113 | 308252 | 329861 | 0.5 |
| Տոկոսային աճը | 21 | 22 | 20 | |

Ինչպես երևում է աղյուսակից, ընկերության հիմնական միջոցների արժեքը և հաշվեկշռային արժեքները նախորդ տարվա համեմատ թե բացարձակ արժեքով, թե տոկոսային առումով (մոտ 20%), աճել են, իսկ ֆոնդերի մաշվածության տոկոսը մնացել է անփոփոխ, ինչը ցույց է տալիս որ հիմնական միջոցները նորացվել են:

Հիմնական միջոցների ընդհանուր վիճակը բնութագրող նշված դրական փոփոխությունները, վերջին երկու տարում ընկերության կողմից իրականացվող տեխնիկական վերազինման և գործող շինարարական մեքենաների և տրանսպորտային միջոցների հիմնանորոգման և արդիականացման մարտավարության արդյունք են:

Հաշվետու տարում նոր հիմնական միջոցների ձեռք բերման համար ընկերությունը ծախսել է 602 965.0 հազ.դր., այդ թվում ըստ առանձին դասերի`

- Շենքեր և շինություններ - Ավտո-տրանսպորտային ծառայությունների տեղամասում կատարվել է 20588 հազ.դր. կապիտալ ներդրում վարչական շենքի կառուցման համար;
- Մեքենա-սարքավորումների գնման համար ծախսվել է - 339 459 հազ.դր.;

- Տրանսպորտային միջոցների գնման համար ծախսվել է - 213 351 հազ.դր.;
- Համակարգչային տեխնիկայի և գրասենյակային գույքի ձեռք բերման վրա ծախսվել է 8 468 հազ.դր.;
- Այլ հիմնական միջոցների գնման համար ծախսվել է 21 099 հազ. դր.:

Գործող տեխնիկայի արդիականացման և կապիտալ վերանորոգման վրա ծախսվել է 75 280.0 հազ.դր.:

Հաշվետու տարում ընկերության համար առավել կարևոր նշանակություն ունեցող նոր ձեռք բերված մեքենա- սարքավորումների և տրանսպորտային միջոցների ցանկը ներկայացվում է աղյուսակ 3 ում:

Աղյուսակ 3

| Հիմնական միջոցի անվանումը | Քանակը | Ընդհանուր գումարը, հազ.դր. |
|---|--------|----------------------------|
| Բետոնի նշակաման արտադրման գործարան ELKON ELKOMIX 35 | 2 | 130643.6 |
| Էքսկավատոր M313D | 1 | 52 937.5 |
| Շարժական գեներատոր QAX 40 32KW | 4 | 26679.6 |
| Շարժական ճնշակ XAS 137 DD EC BOX | 5 | 43968.1 |
| Անվավոր միաշերտի բեռնիչ CATERPILLAR 428E | 1 | 31012.5 |
| Ավտոբեռնիչ KALMAR (DCD 80-60) | 1 | 11994.2 |
| Ավտոբեռնիչ CATERPILLAR (DP 70) | 1 | 10696.8 |
| Հիդրոնուրճ H 70 | 1 | 5400.0 |
| Ավտոբետոնախառնիչ MAN TGA 41.480 | 2 | 95063 |
| Բեռնատար ավտո. Միտցուիչի ֆուզո կանտեր | 1 | 8 142.4 |
| Բեռնատար ավտո. MAN TGA 41.480 | 1 | 56 045.0 |
| Մարդատար ավտո. Suzuki Grand Vitera | 3 | 30571.8 |
| Մարդատար ավտո. Տոյոտա LAND CRUISER V 64.5 | 1 | 4 941.6 |
| Մարդատար ավտո. Շելրոլետ ԱՎԵՆ | 3 | 14762.9 |
| Շարժական վագոն տնակներ | 3 | 20 280.0 |

Բոլոր հիմնական միջոցները սեփականության իրավունքով պատկանում են ընկերությանը:

Ընկերության տրամադրության տակ գտնվող էական մեծություն կազմող հիմնական միջոցը դա ք. Երևան, Վ.Վաղարշյան – 20 հասցեում գտնվող 1835.5 քառ. մ. տարածքով չորս հարկանի վարչական շենքն է, որի արժեքը կազմում է 362737 հազ.դրամ:

Ընկերությանը պատկանող էական մեծություն չկազմող, բայց ընկերության համար կարևոր նշանակություն ունեցող շենքերից, շինություններից և հողատարածքներից են՝

- ք. Երեան, Արտաշիսյան (Ծերեթելի) -106 հասցեում գտնվող 903.2ք.մ. անշարժ գույքը-0.60637 հա հողատարածքով, որը օգտագործվում է ընկերության ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման, վերանորոգման արհեստանոցների, պահեստների համար;
- ք. Երեան, Արտաշիսյան (Ծերեթելի) -105 հասցեում գտնվող 1606.7ք.մ. անշարժ գույքը-1.78845 հա հողատարածքով, որը օգտագործվում է որպես ապրանքանյութական արժեքների պահեստավորման բազա, վերանորոգման արհեստանոց, բետոնի պատրաստման արտադրամաս և այլն;

Վերը նշված բոլոր շենքերը, շինությունները և հողատարածքները գրավադրված են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, որպես վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման երաշխիք:

Սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող մեքենա-սարքավորումներից և տրանսպորտային միջոցներից գրավադրված են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, որպես վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման երաշխիք 61 անվանում տեխնիկա, հիմնականում տրանսպորտային միջոցներ, այդ թվում CATERPILLAR M 318D անվավոր էքսկավատորը և MAN 41.480 մակնիշի երկու բեռնատար ավտոմեքենաները:

«Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ որպես վարկային և երաշխիքային պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման երաշխիք գրավադրված են սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող հետևյալ շինությունները և մեքենա-սարքավորումները`

Արարատի մարզի Հայանիստ գյուղում գտնվող Մասիսի երկաթ բետոնյա կոնստրուկցիաների արտադրամասի անշարժ գույքը,

R320 LC-7A և R290 LC-7A մակնիշի երկու էքսկավատորները, CAT-428F էքսկավատոր-ամբարձիչը, MAN TGA 41.480 մակնիշի երկու ավտոբեռնախառնիչները:

Գրավադրված հիմնական միջոցների օգտագործման սահմանափակումները կայանում է նրանում որ առանց գրավառուի համաձայնության ընկերությունը չի կարող այլ տեղ գրավ դնել, վարձակալության հանձնել կամ օտարել այդ հիմնական միջոցը:

Ընկերությունը հաջորդ տարում շարունակելու է գործող մեքենա-սարքավորումների արդիականացման և նոր հիմնական միջոցների ձեռքբերման գործընթացը սակայն էական մեծություն կազմող հիմնական միջոցի ձեռքբերում չի նախատեսվում:

5.Ֆինանսական վիճակի վերլուծությունը

5.1. Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծություն

Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծությունը իրականացնելու համար ըկերության հաշվեկշիռը ներկայացվում է ներքոհիշյալ տեսքով`

Աղյուսակ 4

| Ակտիվ | | Տարեսկզբին | | Տարեվերջին | | բացարձ. շեղումը | Աճի տեմպը |
|-------|---------------------|------------|------|------------|------|-----------------|-----------|
| | | հազ.դր | % | հազ.դր | % | | |
| 1 | Ընդամենը ունեցվածքը | 2902892 | 100 | 3749011 | 100 | 846119 | 129,1 |
| 1,1 | Ոչ ընթացիկ ակտիվներ | 1760802 | 60,7 | 2301117 | 61,4 | 540315 | 130,7 |
| 1,2 | Ընթացիկ ակտիվներ | 1142090 | 39,3 | 1447894 | 38,6 | 305804 | 126,8 |

| | | | | | | | |
|-------|---------------------|--------|------|---------|------|--------|-------|
| 1,2,1 | Նյութեր | 360029 | 12,4 | 429844 | 11,5 | 69815 | 119,4 |
| 1,2,2 | Դեբիտորական պարտքեր | 780384 | 26,9 | 1010053 | 26,9 | 229669 | 129,4 |
| 1,2,3 | Դրամական միջոցներ | 1677 | 0,1 | 7997 | 0,2 | 6320 | 476,9 |

| Պասիվ | | Տարեսկզբին | | Տարեվերջին | | բացարձ. շեղումը | Աճի տեմպը |
|-------|-----------------------|------------|------|------------|------|-----------------|-----------|
| | | հազ.դր | % | հազ.դր | % | հազ.դր | % |
| 2 | Ունեցվածքը, ընդամենը | 2902892 | 100 | 3749011 | 100 | 846119 | 129,1 |
| 2,1 | Սեփական կապիտալ | 1639052 | 56,5 | 1690295 | 45,1 | 51243 | 103,1 |
| 2,2 | Պարտավորություններ | 1263840 | 43,5 | 2058716 | 54,9 | 794876 | 162,9 |
| 2,2,1 | Երկարաժամկետ պարտավ. | 309994 | 10,7 | 400093 | 10,7 | 90099 | 129,1 |
| 2,2,2 | Կարճաժամկետ պարտավոր. | 654569 | 22,5 | 349975 | 9,3 | -304594 | 53,5 |
| 2,2,3 | Կրեդիտորական պարտքեր | 299277 | 10,3 | 1308648 | 34,9 | 1009371 | 437,3 |

Նախորդ տարվա համեմատ ընկերության ֆինանսական վիճակը բնութագրող հաշվեկշռի հոդվածների բացարձակ արժեքները, դրաց տեսակարար կշիռը, ինչպես նաև հաշվեկշռի հանրագումարը նախորդ ժամանակահատվածի համեմատ կրել էական փոփոխություններ: Չնայած այն հանգամանքին, որ հաշվեկշռի ակտիվային մասի առանձին հոդվածների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել, ընկերության ընդհանուր ունեցվածքը հաշվետու տարում աճել է 864119 հազ. դրամով և տարեվերջին կազմել է 3749011 հազ.դր.: Նշված աճը տեղի է ունեցել 36.1% շրջանառու միջոցների, 63.9% հիմնական միջոցների աճի հաշվին:

Ապրանքանյութական պաշարների աճը բացարձակ արժեքով կազմել է 69 815 հազ.դ., դեբիտորական պարտքերինը՝ 229 669 հազ.դր., դրամական միջոցների և դրանց համարժեքներինը՝ 6320 հազ.դր.:

Ընկերության ունեցվածքի աճի 6.1%-ը՝ 51 243 հազ.դր. պայմանավորված է սեփական միջոցների աճի հաշվին, 93.9%-ը պարտավորությունների աճի հաշվին: Ընթացիկ պարտավորությունները տարեսկզբի համեմատ աճել են 794 876 հազ.դր. և կազմել 2058716 հազ.դր.: Նշված աճը հիմնականում տեղի է ունեցել պատվիրատու կազմակերպություններից ստացված կանխավճարների հաշվին, որի արդյունքում կրեդիտորական պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ տարվա 10.3%-ից աճել է 34.9%, իսկ գումարը աճել է 1 009 371 հազ.դր. և տարեվերջում կազմել 1 308 648 հազ.դր.:

Կրեդիտորական պարտքերի աճի պատճառով նվազել է սեփական կապիտալի տեսակարար կշիռը, որը նախորդ տարվա 56.4% նվազել է և կազմել 45.1%, չնայած 51243 հազ.դր. բացարձակ արժեքով աճին:

Նախորդ տարվա համեմատ 90099 հազ.դր. աճել են երկարաժամկետ պարտավորությունները, 304594 հազ.դր. նվազել է կարճաժամկետ պարտավորությունները:

5.2. Ֆինանսական կայունության վերլուծություն

Ֆինանսական կայունության վերլուծությունը կատարվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

5.2.1. Ֆինանսական անկախության գործակից:

$$Q_1 = 1690295 / 3749011 = 0.45$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5: Ցուցանիշի 0.45 արժեքը մոտ է ցանկալի փոքրագույն մակարդակին և ցույց է տալիս, որ ընկերության ունեցվածքի կեսը ձևավորվել է սեփական կապիտալի հաշվին, մյուս մասն էլ՝ փոխառու կապիտալի հաշվին:

5.2.2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից:

$$Q_2 = 2058716 / 1690295 = 1.2$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

5.2.3. Ինքնավարության գործակից:

$$Q_3 = 1690295 / (1690295 + 400093) = 0.81$$

Գործակցի բարձր արժեքը ցույց է տալիս, որ ընդհանուր երկարաժամկետ միջոցների մեջ սեփական կապիտալի գումարը գերակշռում է:

5.2.4. Գործող կապիտալ:

$$Q_4 = (1690295 + 400093) - 2301117 = - 210729 \text{ հազ.դր.}$$

5.2.5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$$Q_5 = (1447894 - 1658623) / 1447894 = - 0.146$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.1:

5.2.6. Պաշարների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$$Q_6 = (1447894 - 1658623) / (429844 + 38901) = - 0.45$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:

5.2.7. Սեփական կապիտալի մանրայնության գործակից:

$$Q_7 = - 210729 / 1690295 = - 0.125$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:

5.2.8. Գույքի ռեալ արժեքի գործակից:

$$Q_8 = 2464192 / 3749011 = 0.66$$

Այս ցուցանիշի 0.66 արժեքը (ընդունելի փոքրագույն արժեքը 0.5) ցույց է տալիս, որ ընկերության արտադրական պոտենցիալը գտնվում է բավարար վիճակում:

5.3. Հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն

Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են՝

5.3.1. Ընթացիկ իրացվելիության գործակից

$$Q_9 = 1447894 / 1658623 = 0.873$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

5.3.2. Արագ իրացվելիության գործակից:

$$Q_{10} = 979149 / 1658623 = 0.59$$

Այս ցուցանիշի սահմանային փոքրագույն արժեքը 1 է:

5.3.3. Բացարձակ իրացվելիության գործակից:

$$Q_{11} = 7997 / 1658623 = 0.005$$

Այս գործակիցի ցանկալի արժեքը ընկած է (0.2; 0.5) թվերի սահմաններում:

Գործող կապիտալի և հաշվեկշռի իրացվելիության հետ կապված գործակիցների արժեքների ցածր նակարդակը հիմնականում պայմանավորված է ստացված կանխավճարներով, որոնք ապագա հասույթ լինելով հանդերձ ներառված են պարտավորություններում, ինչպես նաև գործառնական դրնական մուտքերի օգտագործումը ներդրումային նպատակներով (հիմնական միջոցների ձեռքբերման):

5.4. Ակտիվների շրջանառելիության վերլուծություն

Շրջանառելիությունը բնութագրող ցուցանիշներն են՝

5.4.1. Ակտիվների շրջանառելիության գործակից:

$$Q_{12\text{ՆՏ}} = 2816482 / 2910842 = 0.97 \quad (\text{Նախորդ տարի})$$

$$Q_{12\text{ՀՏ}} = 3343569 / 3325952 = 1.01 \quad (\text{Հաշվետու տարի})$$

5.4.2. Սեփական կապիտալի շրջանառելիության գործակից:

$$Q_{13\text{ՆՏ}} = 2816482 / 1575565 = 1.79$$

$$Q_{13\text{ՀՏ}} = 3343569 / 1664674 = 2.01$$

5.4.3. Արտադրության միջոցների շրջանառելիության գործակից:

$$Q_{14\text{ՆՏ}} = 2816482 / 2317206 = 1.22$$

$$Q_{14\text{ՀՏ}} = 3343569 / 2247298 = 1.49$$

5.4.4. Հիմնական միջոցների շրջանառելիության կամ ֆոնդահատույցի գործակից:

$$Q_{15\text{ՆՏ}} = 2816482 / 1733476 = 1.62$$

$$Q_{15\text{ՀՏ}} = 3343569 / 1830560 = 1.83$$

5.4.5. Ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակից:

$$Q_{16\text{ՆՏ}} = 2816482 / 1053973 = 1.62$$

$$Q_{16\text{ՀՏ}} = 3343569 / 1294992 = 1.83$$

5.4.6. Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից:

$$Q_{18\text{ՆՏ}} = 2816482 / 316640 = 8.89$$

$$Q_{18\text{Յ}} = 3343569/640763 = 5.22$$

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը կազմում է՝

$$Q_{\text{ԼՏ}} = 360 / 8.89 = 41 \text{ օր}$$

$$Q_{\text{ՅՏ}} = 360 / 5.22 = 69 \text{ օր}$$

5.4.7. Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից:

$$Q_{19\text{ԼՏ}} = 2816482/426045 = 6.61$$

$$Q_{19\text{ՅՏ}} = 3343569/803963 = 4.16$$

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը կազմում է՝

$$Q_{\text{ԼՏ}} = 360 / 6.61 = 55 \text{ օր}$$

$$Q_{\text{ՅՏ}} = 360 / 4.16 = 87 \text{ օր}$$

5.4.8. Պաշարների շրջանառելիության գործակից:

$$Q_{19\text{ԼՏ}} = 2816482/399987 = 7.04$$

$$Q_{19\text{ՅՏ}} = 3343569/418183 = 8.00$$

Շրջանառելիության գործակիցների արժեքները և դրանց փոփոխության տեմպերի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

| h/h | Շրջանառելիության գործակիցների | | | |
|-----|-------------------------------|-----------|--------|----------------------|
| | Անվանումը | Արժեքները | | Փոփոխության տեմպը, % |
| | | 2008թ. | 2009թ. | |
| 1 | Ակտիվներ | 0,97 | 1,01 | 103,9 |
| 2 | Սեփական կապիտալ | 1,79 | 2,01 | 112,4 |
| 3 | Արտադրության միջոցներ | 1,22 | 1,49 | 122,4 |
| 4 | Հիմնական միջոցներ | 1,62 | 1,83 | 112,4 |
| 5 | Ընթացիկ ակտիվներ | 2,67 | 2,58 | 96,6 |
| 6 | Դեբիտորական պարտքեր | 8,89 | 5,22 | 58,7 |
| 7 | Կրեդիտորական պարտքեր | 6,61 | 4,16 | 62,9 |
| 8 | Պաշարներ | 7,04 | 8,00 | 113,5 |

Ինչպես երևում է աղյուսակից դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շրջանառելիության վիճակը բնութագրող ցուցանիշների արժեքները նախորդ տարվա համեմատ զգալիորեն վատթարացել են, որը հիմնականում պայմանավորված է «Հազարամյակի մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից ֆինանսավորվող՝ ոռոգման ինքնահոս համակարգերի և մայր ջրանցքների վերակառուցման աշխատանքների կատարման համար ստացված կանխավճարներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ նշված պայմանագրերով կատարված աշխատանքների վճարումը, համաձայն պայմանագրի պայմանների, իրականացվում է միջանկյալ կատարողականի ակտը հաստատելուց հետո 56 օրվա ընդացքում:

Ընկերության ակտիվների շրջանառելիության վիճակը բնութագրող մյուս ցուցանիշների արժեքները նախորդ տարվա համեմատ մնացել են նույն մակարդակին կամ համեմատաբար բարելավվել են:

6. Ֆինանսական արդյունքների վերլուծություն

Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծությունը իրականացնելու համար ըկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացվում է ներքոհիշյալ տեսքով`

Աղյուսակ 6

| Ցուցանիշի անվանումը | Նախորդ տարի | | Հաշվետու տարի | | Բացարձակ շեղումը հազ.դր |
|--|-------------|------|---------------|------|----------------------------|
| | հազ.դր | % | հազ.դր | % | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 2 816 482 | 100 | 3 343 569 | 100 | 527 087 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 2 706 029 | 96,1 | 2 917 211 | 87,2 | 211 182 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ | 110 453 | 3,9 | 426 358 | 12,8 | 315 905 |
| Գործառնական շահույթ | 176 747 | 6,3 | 34 110 | 1,0 | -142 637 |
| Գործառնական շահույթ (վնաս) | 287 200 | 10,2 | 460 468 | 13,8 | 173 268 |
| Ֆինանսական և այլ ոչ գործառնական վնաս | -71 517 | | -339 383 | | -267 866 |
| Սովորական գործունեությունից շահույթ | 215 683 | 7,7 | 121 085 | 3,6 | -94 598 |
| Շահութահարկի գծով ծախս | -42 903 | | -19 842 | | 23 061 |
| Զուտ շահույթը | 172 780 | 6,1 | 101 243 | 3,0 | -71 537 |

Աշխատանքների, ծառայությունների իրացումից համախառը շահույթի տեսակարար կշիռը, նախորդ տարվա 3.9% - համեմատ աճել է մոտ երեք անգամ և հաշվետու տարում կազմել 12.8%: Բացարձակ արժեքով աճը կազմել է 315905 հազ.դր: Նշված դրկան փոփոխության հիմնական պատճառներից են` իրացված շինարարական աշխատանքների կազմում կառուցվածքային (աշխատանքների տեսակների) տեղաշարժերը և կատարված աշխատանքների ծավալների աճը, որի արդյունքում նվազել է հաստատուն ծախսերի տեսակարար կշիռը և իրացման ամեն մի հաջորդ միավորի դիմաց ընկերությունը ստացել է սահմանային շահույթին մոտ շահույթ:

Զուտ շահույթի նվազումը պայմանավորված է ոչ գործառնական ծախսերի աճի և գործառնական այլ շահույթի նվազումով:

Հաշվետու տարում զուտ շահույթի բացարձակ արժեքի նվազումը բնականաբար իր ազդեցությունն է թողել կապիտալի շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշների

վրա, որոնց արժեքները, բացի իրացման շահութաբերության գործակցի, նախորդ տարվա համեմատ վատթարացել են:

1. Ակտիվների շահութաբերության գործակցից նախորդ տարվա՝

$$Q_{\text{ՆՏ}} = 172780 / 2910843 = 0.059$$

հաշվետու տարում կազմել է՝

$$Q_{\text{ՅՏ}} = 101243 / 3325952 = 0.03$$

2. Սեփական կապիտալի շահութաբերության գործակցից՝

$$Q_{\text{ՆՏ}} = 172780 / 1575565 = 0.11$$

$$Q_{\text{ՅՏ}} = 101243 / 1664674 = 0.061$$

3. Իրացման շահութաբերության գործակցից՝

$$Q_{\text{ՆՏ}} = 110453 / 2816482 = 0.039$$

$$Q_{\text{ՅՏ}} = 426358 / 3343569 = 0.128$$

4. Ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակցից՝

$$Q_{\text{ՆՏ}} = 172780 / 1053973 = 0.164$$

$$Q_{\text{ՅՏ}} = 101243 / 1294992 = 0.078$$

7. Շահույթի բաշխումը և կանխատեսումը

Վերջին երեք տարվա ընթացքում ընկերության զուտ շահույթի օգտագործման և շահութաբաժինների վճարմանն ուղղվող գումարների վերաբերյալ տվյալները ներկայացվում են ներքոհիշյալ աղյուսակում՝

դրամ

| Ցուցանիշների անվանումը | Տարեթվերը | | |
|--|-----------|------------|-------------|
| | 2006 | 2007 | 2008 |
| Զուտ շահույթը | 5 124 000 | 45 808 000 | 172 783 000 |
| Շահութաբաժինների վճարմանն ուղղվող գումարը | 5 124 000 | 45 808 000 | 50 000 000 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | 251 | 2 240 | 8 448 |

Նախատեսվում բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացնել 2009թ. 110 243 հազ.դր. զուտ շահույթից շահութաբաժինների վճարմանը ուղղել 50միլ. դրամ:

8. Հարկային պարտավորությունները

Հարկային պարտավորությունների վերաբերյալ տվյալները բերված են ներքոհիշյալ աղյուսակում

հազ. դրամ

| Հարկի անվանումը | տարեսկզբի մնացորդը | հաշվարկված | մարված | տարեվերջի մնացորդը |
|----------------------|--------------------|------------|----------|--------------------|
| Ա. Ա. Հ | 9236 | 601388.3 | 622939.3 | (12315) |
| Շահութահարկ | 18817.2 | 60648.5 | 65673.1 | 13792.6 |
| Եկամտահարկ | 8983.1 | 96119.8 | 98505.6 | 6597.3 |
| Գույքահարկ | 373.6 | 1454.5 | 1424.3 | 403.8 |
| Բնապահպանման վճարներ | (482.2) | 55.2 | | (427.0) |
| Հողի հարկ | 148.7 | 594.5 | 600.8 | 142.4 |

Ընկերությունը օգտվում է ՀՀ կառավարության 12 հոկտեմբերի 2006թ. N1461-Ն որոշմամբ սահմանված Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կնքված «Հազարամյակի մարտահրավեր» համաձայնագրով նախատեսված հարկային և մաքսային վճարների գծով կիրառվող արտոնություններից, նշված ծրագրերի միջոցների հաշվին կատարված աշխատանքների մասով:

9.ԱՐՏՈՆԱԳՐԵՐ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ


ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից ընկերությանը տրամադրվել է ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

1. Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝
ՀԻՂՐՈՏԵՆՆԻԿԱԿԱՆ
Լիցենզիայի համարն է 7496
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ
2. Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝
ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ
Լիցենզիայի համարն է 8296
Տրված է 19.03.2004թ. գործողության ժամկետը -անժամկետ
3. Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝
ԷՆԵՐԳԵՏԻԿ
Լիցենզիայի համարն է 8589
Տրված է 14.06.2004թ. գործողության ժամկետը. -անժամկետ
4. Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝
ՀԱՏՈՒԿ
Լիցենզիայի համարն է 8590
Տրված է 14.06.2004թ. գործողության ժամկետը երկարաձգված է մինչև 14.06.2010թ.
5. Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
Լիցենզիայի համարն է 8591
Տրված է 14.06.2004թ. գործողության ժամկետը -անժամկետ
6. Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝
ԿԱՊԻ
Լիցենզիայի համարն է 11984
Տրված է 29.04.2008թ. գործողության ժամկետը -անժամկետ
7. ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից ընկերությանը տրամադրվել է՝
ա. Պայթեցման աշխատանքների կատարման գործունեության իրականացման
07 ՊԱ No 1 ԼԻՑԵՆԶԻԱ
Տրված է 12.01.2004թ. գործողության ժամկետը - անժամկետ:

բ. Պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների առևտրի իրականացման
ՊՆՊՄ N 05 ԼԻՑԵՆԶԻԱ
Տրված է 25.05.2005թ. գործողության ժամկետը - անժամկետ:
8. ՀՀ համապատասխանության հավաստման բնագավառում սերտիֆիկացման մարմինների եվ փորձարկման լաբորատորիաների հավատագրման խորհուրդ
Հավատարմագրման վկայագիր N AST-001, Q-0021-2009, որպես փորձարկման լաբորատորիա:
Տրված է 02.06.2009թ. գործողության ժամկետը մինչև 02.06.2012թ.:

10. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը



Վերջին հինգ տարվա ընդացքում ընկերության կառավարման մարմինների անդամների նկատմամբ դատական գործեր չեն հարուցվել, պետական որևէ կառավարման մարմնի կողմից պատասխանատվության չեն ենթարկվել և առնչություն չեն ունեցել որևէ սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործնթացի հետ:

Շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև բացակայում է:

Պայմանավորվածություն խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ, համաձայն որի որևէ անձ ընտրվել կամ նշանակվել է ընկերության կառավարման մարմնի անդամ չկա:

11. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Ընկերության աշխատակիցների միջին տարեկան ցուցակային թվաքանակը 2009թ. կազմել է 510 մարդ, որից ղեկավարներ 47 մարդ:

12. ԽՈՇՈՐ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված խոշոր բաժնետերերն է՝ Հակոբ Հակոբյանը, բաժնետոմսերի քանակը 11286 հատ, (55.1829%):

Բոլոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանչյուրը տալիս են ձայնի միևնույն իրավունքը:

13. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության վերաբերյալ աուդիտորական եզրակացության, և հաշվապահական հաշվառման տարեկան ֆինանսական հաշվետվությունների ձևերը կցվում են:

14. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԵՏԱԳԱ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արփա-Սևան» ԲԲԸ որոշել է հաշվապահական հաշվառումը վարել ֆինանսական հաշվետվությունները կազմել և ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն, սահմանելով ՖՀՄՍ անցնելու ամսաթիվը 2009թ. հունվարի 1-ը:



[Signature] Պ. Դակոբյան

Կատարող՝ Զ. Վարդանյան հեռ.261190

**ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ No.160**

Ներկայացվում է

«Արփա-Սևան» ԲԲԸ-ի բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արփա-Սևան» ԲԲԸ-ի կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են համախմբված հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2009թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար համախմբված ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին էական տեղեկատվություն և այլ բացատրական ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՀՀՀՀՍ-ների: Այդ պատասխանատվությունը ներառում է այնպիսի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար տեղին ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում, որոնք զերծ կլինեն սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, ինչպես նաև տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների օգտագործում:

Աուդիտորների պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրինք ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 21-ի N 509-Ն որոշմամբ հաստատված աուդիտի ստանդարտներով: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից և ներառում են նաև այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այս ռիսկը գնահատելիս՝ աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերջիններիս ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել այդ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման

քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների ողջամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները «Արփա-Սևան» ԲԲԸ-ի համախմբված ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2009թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն ՀՀՀՀՄ-ների:



Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն



Մուրեն Գաբրիելյան
Աուդիտոր



27 ապրիլի, 2010թ.,
ք. Երևան, Տերյան 105/1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

առ 31.12.2009
(ամսաթիվ, ամիս, տարի)

| | | ծածկագիրը | |
|--|---------------------------|------------------|----------|
| Ընկերության անվանումը | «Արփա-Սևան» ԲԲԸ | 4630560 | |
| Փաստացի գործունեությունը | Կապիտալ շինարարություն | 45302 | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 00003206 | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 26412000831 | |
| Չափի միավորը | | հազ. դրամ | |
| Գտնվելու վայրը | ք. Երևան, Վ. Վաղարշյան-20 | հեռախոսը | 26-11-50 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ք. Երևան, Վ. Վաղարշյան-20 | հեռախոսը | 26-11-60 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|--|------------|---------------------|--|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 1 665 673 | 1 995 447 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 020 | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | | |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 040 | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | 95 129 | 216 530 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 070 | 0 | 89 140 |
| Կանխավճար | 071 | | 89 140 |
| | 072 | | |
| | 073 | | |
| | 074 | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 1 760 802 | 2 301 117 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 360 029 | 429 844 |
| Աճեցվող և բավող կենդանիներ | 100 | | |
| Արագամաշ առարկաներ | 110 | 4 702 | 38 901 |
| Անավարտ արտադրություն | 120 | | |
| Արտադրանք | 130 | | |
| Ապրանքներ | 140 | 2 889 | |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 22 414 | 241 506 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 430 949 | 495 918 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 482 | 12 742 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 14 963 | 27 470 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 190 | 281 916 | 180 503 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 200 | 1 677 | 7 997 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | 22 069 | 13 013 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 211 | 22 069 | 13 013 |
| | 212 | | |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 1 142 090 | 1 447 894 |
| Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ | 230 | 2 902 892 | 3 749 011 |

Գեկավար

Պարույր Հակոբյան

անուն ,ազգանուն

Կ.

Տ.

Գլխավոր հաշվապահ

Սեդա Փարսյան

անուն ,ազգանուն

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|--|-----|---------------------|--|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար | 240 | 51 130 | 51 130 |
| Էմիսիոն եկամուտ | 250 | | |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 260 | 562 714 | 465 256 |
| Կուտակված շահույթ | 270 | 964 628 | 1 113 329 |
| Պահուստային կապիտալ | 280 | 60 580 | 60 580 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝ | 290 | 0 | 0 |
| | 291 | | |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 1 639 052 | 1 690 295 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 310 | 113 162 | 244 067 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 320 | 196 832 | 156 026 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | | |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 340 | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 350 | 0 | 0 |
| | 351 | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 309 994 | 400 093 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | 651 469 | 344 975 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 3 100 | 5 000 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 31 326 | 77 027 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 54 705 | 974 633 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 37 559 | 20 936 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական | 420 | 2 488 | 12 923 |
| ապահովագրության գծով | | | |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ | 430 | 117 169 | 126 126 |
| հատուցումների գծով | | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 440 | 34 518 | 38 692 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 15 679 | 48 311 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 460 | | |
| Ընթացիկ պահուստներ | 470 | 5 833 | 10 000 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 480 | 0 | 0 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 481 | | |
| | 482 | | |
| | 483 | | |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 953 846 | 1 658 623 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 2 902 892 | 3 749 011 |

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

31.12.2009
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

| | | ճածկագիրը |
|--|---------------------------|-------------------|
| Ընկերության անվանումը | «Արփա-Սևան» ԲԲԸ | 4630560 |
| Փաստացի գործունեությունը | Կապիտալ շինարարություն | 45302 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 00003206 |
| Պետական ռեզիստորում գրանցման համարը | | 26412000831 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ք. Երևան, Վ. Վաղարշյան-20 | հեռախոսը 26-11-50 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ք. Երևան, Վ. Վաղարշյան-20 | հեռախոսը 26-11-60 |

| Ֆուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան | Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան |
|---|-----|---|---|--|--|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 2 816 482 | 3 343 569 | 1 102 730 | 1 449 995 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | -2 488 752 | -2 713 934 | -1 159 806 | -969 799 |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 327 730 | 629 635 | -57 076 | 480 196 |
| Իրացման ծախսեր | 040 | | | | |
| Վարչական ծախսեր | 050 | -217 277 | -203 277 | -77 679 | -48 010 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 110 453 | 426 358 | -134 755 | 432 186 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | 262 048 | 117 566 | 7 543 | 30 680 |
| Վաճառքից | 071 | 262 048 | 117 566 | 7 543 | 30 680 |
| Վարձակալությունից և այլ | 072 | | | | |
| | 073 | | | | |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | -85 301 | -83 456 | -7 282 | 31 828 |
